Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
S-17

12 MAR 2011

891.99
S-17

ՏԱՃԱՐ ԳՈՒՍԱՑԻՑ

ԹԱՆԳԱՐԱՆ

ԷՊԳԵՑԻՆ ԱՐԴՈՅ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ԳԱԼԱԹԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՑՈՎՀԱՆՆՈՒ ՍԻՍՀԷՆՏԻՍԵԱՆ

ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՓՈՂՈՑ ԹԻՒ 17

1861թ.

13 .08. 2013

36585-62

ԹԱՆԳԱՐԱՆ

ԷՋԳԱՑԻՆ ԵՐԳՈՑ

Գոս. Հանրային գրադարան
Гос. Публ. Библиотека
Հայ.Ս.Խ.Հ.-ССР А.
им. А. Мясникян
Ս. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ անվ.
(575
38)

Ը. Օ. Դ

Ընդունելի եմ, որ բարեսէր Հեղինակ մը, եթէ իր գրուածներէն մաս մը աեանէ պատուախրութեամբ յիշատակուած ուրիշ մը, կզգայ անպատմելի ուրախութիւն. մանաւանդ երբ իր նոյն քաղցր երկասիրութեան՝ ընդհանուր Ազգին ոգւոյն, օգտին և զգացմանցը ծառայելու գեղեցիկ պատուոյն արժանաւորիլը նկատէ։

Ուստի այս վստահութեամբ համարձակեցայ քանի մը Ազգային ընտիր երգեր՝ որ խմաստուն ու ճարտար գրիչներու նուէրներ են առ սիրելի Հայրենիս մեր, հաւաքելով տպագրել տալ "Թանգարան Ազգային Երգոց" — անուամբ։

Գաղջայցս եմ որ Հայրենասէր սրտերու մէջ քաղցր և արժանաւոր ընդունելութիւն մը կգտնէ, որոնց սիրելի է միշտ իրենց ցանկալի Հայրենեաց փառաւոր յիշատակաւը սփոփիլ ու արդահատիլ, տքնել ոգի ի բուին Անոր նորափառ վերանորոգմանը սատարելու և նուաղեալ փառացը շնչնչ տալու համար։

Չեմ կրնար ուրախութիւնս բռնել, երբ կտեսնեմ որ ժամանակէ մ՚ի վեր Հայրենասէր Անձինք՝ փոխանակ անվայել նուագներու՝ Ազգային երգեր կհնչեցընեն գտնուած տեղերնին։ Ո՛ւր էր թէ՝ այսուհետև ուխտեր ամէն ոք ո՛ և իցէ զուարճութեան և զբօսանաց՝ ազգային Հայրենական երգերով շուք տալ, որոնք ոչ նուազ ազդեցութիւն ունին թէ՛ իրենց սիրալիր բանիւքը և թէ՛ իրենց ներդաշնակ և գողտր հնչմամբքը։— Եւ ահա "Թանգարանիս" մէջ գտնուած երգերուն ամէնն ալ ձայնագրեալ են, որոնցմէ մէկ քանին ար-

դէն տպագրութեամբ երևան ելած են, և հեղինակ ալ պիտի շարունակուին՝ աշխատասիրութեամբ նշանաւոր Զայնագիտաց։

Արդ՝ կ՚յուսամք որ Հայրենասէր Ռուսմնականաց գրգիռ մը կըլլայ այս՝ այսուհետև ալ ջանալ նուիրել Ազգիս ընտիր երգեր՝ բնաջինջ ընելու համար այնպիսի օտար և անվայել հնչմունքները, . . . որոնք շատ անգամ զուարճութեան կերպարանքով՝ վարուց ու բարուց ապականութեան վնասակար թոյներ կդոյանան. զի ի՞նչ բան անհնարին է բարբոքեալ կրկից, որոնց ի շինչոյց՝ շատ անգամ շատերը անզգայութեամբ զոհ կըլլան կերպով մը. վասնորոյ մեծապէս փափաքելի է զարթուցանել մեր սիրելի Ազգայնոց մեծագործ կիրքերը՝ ի յիշատակ փառաց Հայրենեաց և ի նուիրական սէր Նորին։

Ուրեմն կխնդրեմ, ներուելի այս գեղեցիկ յանդգնութեանս՝ (որ անհնարին սիրոյս ու փափաքանացս միայն արդիւնքն է) թէ՛ Մեծարգոյ Հեղինակներէն և թէ՛ Հայրենասէր Ազգայիններէս։

Մ. Բ. ԻԻԹԻՒՃԵԱՆ
ԱՀԱԿԵՐՏ
ԱՐՔՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ

ԱՌ

ՈԳԻՍ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Պանդխտի տարագրելոյ
Ի հայրենէն իւր ի ծոցոյ,
Ո՞չ ախորժ թուեցին բանք
Կամ զՀայրենեաց իւրոց գրուագ։

Ա՛յսպէս որոց ոգիք՝ յանուն
Հալին վայրաց քաղցր Հայրենեաց,
Ո՞չ հեշտին՝ երգոցս հնչիւն
Ազգիցեն յուշին Այնպիսեաց։

Ապ հին դարուց փառաց Հայոց
Յուշ մեզ ածեն զյիշատակ,
Խրախոյս տուեալ տքնել անխոնջ
Յանդրէն կանգնումն այնց անսայթաք։

ԱՌ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԵԴԻՆԱԿՍ

Որ զՀայրենեաց երգէք զսէր
Յաւիւն, յաշխոյժ ջերմջեր,
Ոչ զուարթ ակնարկեցէք,
Ի այն՝ որ զՁերդ Ձեզ ձանէ զերկ։

Յորչափ Տողերս ի սիրտ Հայկեանց
Կան իբր 'կրթող յաւէրժակաց,
Անմահ կացցեն Անուանք Գրչացդ
Ի շնորհս մեծի մերս Հայրենեաց։

Յորչափ երգոցդ գեղգեղ գլի
Հայորերոյ յերկրեբրթիս,
Անմահասջիք յազատն Պասիս
Ի ցանկալին իմ Հայրենիս։

ԳՄ

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Յեռ դառնաշունչ ձմերայնւոյն
Այ ի գաւառն իմ հայրենի
Գեղաձիծաղ դառնայ գարուն։
Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղկունք
Այ ճռուողեն նորեկ ծիծառունք
Ի քեզ ես դարձ առնում յայնժամ
Ով ցանկալիդ իմ Հայաստան։
Ոչ Հելուետեան ինձ դաշտավայր,
Այ կամ զուարթ մարգագետին
Ոչ քան զքեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկին։
Հեռի ի քէն պանդուխտ գոլով
Բոյովդ յար տապիմ անձկով
Ի խանձարուրդ իմոց կենաց
Ով Հայաստան առնում քեզ դարձ։
Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկի ոտոց իմ գեղ դալար
Այ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթեւ ի գարշապար։
Ուր հէք մուսայս մատն ի յերեր
Մոռանայցէ երգել զքէր
Օ՜նէնջ ի ծոցդ առնում յայնժամ
Ով ցանկալիդ իմ Հայաստան.

Մ. ՊԷՐԻՔԹԱՐԼԵԱՆ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան քաղցր իմ Հայաստան
Ոգեաբ յանուն դ հալեցան .
Մինչեւ ցերբ ես պանդուխդ .
Սրտիս իմ երբ լցցի ուխտ ։
Ազգս արդեօք անձկալից
Նրբեմն զքեզ տեսցէ՞ն
Ազգս այս արտասուալից
Դադարեսցի՞ն արդեօք ։
Շուրթն իմ ի հողդ կենաւոր
Տացէ՞ զհամբոյրն ուխտաւոր ,
Արդեօք գլուխս այս վշտակոծ
Անգիցէ՞ քոյդ ի ծոց ։
Հայաստան սէր իմ Հայաստան
Ոգեաբ ի տենչդ հալեցան
Մինչեւ ցերբ ես ի քէն պանդուխտ
Սրտիս իմ երբ լցցի ուխտ ։

Խ . Վ . ԳԱԼՓԱՑԵԱՆ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս որրան
Դու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Ի վեհ անուանդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ
Ոգեւորի ի՛նոր խրախոյս.
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,
Ի քեզ՝ ի քեզ յոյս իմ միայն։
Հայաստան . . . . . .։
Հայաստան անուն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան
Եգիտ և քև ապրեցաւ Նոյ.
Հայաստան . . . . . .։
Դեռք քաջառաջք ազենաբուղխ.
Օ՜հոգդ բարի առնեն յուսոթի.
Քև ապրիմ ես, քև միշտ ցնծամ,
Քև, քև պանծամ փառք իմ միայն.
Հայաստան . . . . . .։
Հայաստան ծնող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան
Քո զեփիւռին քաղցր է շնչիւն.
Հայաստան . . . . . .։
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան.
Օ՜ր շնչեցին և զօրացան,
Օ՜ քեզ յիշեմ զքեզ սիրեմ
Օ՜ քեզ, զքեզ, սէր իմ միայն
Հայաստան . . . . . .։

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՐԶԱ ՎԱՆԱՆԴԵՑԻ

ԴԱՇՆԱԿ

ՑԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՄԱՆ ՀԱՅԿԵԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ ՈՐ Ի ԽԱՍԳԻՒՂ.

Օ՜ն մեր նախնի դարուց կարդամք հրաւէր,
Նախնի դամենաց՝ սուրբ ձեռաց հիւս պարակաք.
Մեր հայրենի փառաց մանկունքն ամենեքեր
Դան յերեւան գեղեցկահիւս գիրակաք։
Գունդ ի գունդ
Միրանք ի թունդ։
Յամենակաց՝ անցեալ՝ վասն կրթարան
Նոր դիպաց՝ նոր զգացմանց կարիգաղիր
Ահա մեզ նոր՝ արդ կկանգնի տեսարան
Թէ կրթութեան՝ թէ հանճարոյ արդադիր։
Հոս ձայն կուտանք մենք ծաղկալից
Հայաստանի սուրբ դաշտերուն,
Եւ կցրուի արտից թախիծ
Երբ հայրենեաց յիշեմք զանուն։
Ո՞վ սուրբ Հայաստան
Փառաց օթեւան
Որք զաւկներդ հոս
Քեզ պիտի ողբան։
Հոս երազ՝ ամենահ
Քո նախնի փառաց
Մեզ պիտի վառէ
Ի մէր հայրենեաց։
Մայրիկ Հայաստան
Փառաց գերեզման
Որք որդիքդ այրիդ
Հոս պիտի ողբան։

Մէկ մայր մ՚ունիմք մերն Հայաստան և հոգին
Աղբայրութեան արտերունս մէջ կանգայ։

Օ՛ն չարաղէպ մեր բաղդն ու սէր կախթոպին
Հոս միութեան ուժոյն ընենք ենթակայ։
Եւ ձեռք, ջանք
Միմեանց տանք։

Ինդհանրական սէրն և հոգին հայութեան
Մ՝եզ մուսայից օթեւանիս նուիրի
Հնչեն Հայ փառք՝ անուն՝ նոր՝ սուր յաւիտեան
Ներէն Սիսակ, Գեղամ ի կեանս հրուիրի։

Կվերածնին հոս ոսկի դարք,
Հոս տեղ մտքեր կրնան սրուիլ.
Կշտկուին հոս անկիրթ քարք,
Հոս և ծիծաղ կրնայ գտուիլ։
Ով սուրբ Հայաստան
Քաջայ օթեւան
Հոսկէ որդիքդ հոն
Գիրկդ պիտի դան։
Հոս ոՀ Հայ լեզուին
Ներ զարդ՝ ձև կառնու
Կեանք անմեղ և՝ երկինք
Կապրեն սրտերու
Քաղցրիկ Հայաստան
Մեր հպարտ օթեւան,
Ծոցդ որդիքդ որ գան
Էր պիտի ողբան։

Գ. Գ. Հ.

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ

Մայր — Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտրում եմ։

Ոայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով՝
Փախչում էին լալագին։

Արաքս՝ ինչո՞ւ ձկանց հետ
Խաղ չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չհասած՝
Սգաւոր ես ինձ նման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ հպարտ աչերից
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պղտորիլ յաւտակդ,
Հանդարտ հոսէ՛ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կհասնիս դէպ ի ծով։

Վարդի թփեր թող բուսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ։

Աշտադալար ուռիները
Սաւ ծոցի մէջ քու ջրին
Ճկուն ստան ու տերեւ
Թող թաց անեն տապ օրին։

Էմերիդ մօտ երգելու
Հոմիւք թող գան համարձակ
Գառն ու ուլը քու վճիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ։

Անէքը ուռցուց Արտքը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով՝
Էսպէս խօսեց յատակից։

"Խիզախ, անմիտ պատանի,
Ինչպէս ինչու դարեւոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

Սիրելիի մահից հետ
Երբ ես տեսել, որ այրին
Ոտից գլուխ պճնուի
Իր զարդերով թանկագին։

Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Ցաւերն՝ ինձ են տեսել,
Ցաւերին՝ ես օտար եմ։

Կար ժամանակ որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պչրանքով
Փախչում էի ամբէս։

Յատակս պարզ ու վճիտ,
Կոհակներս ոլորուն,
Լուսաբերը՝ մինչեւ այդ
Ջրիս միջին էր լողում։

Ինչպէս մնաց այն օրից
Ո՛ր ջրամօտ գեղերս,

Ո՛րը իմ շէն քաղաքից,
Ո՛ր բերկրանի տեղերս։

Տուրքը չրի ամէն օր
Իր սուրբ ծոյէն Արարատ,
Մայրախնամ ինձ անուշդ
Պարգեւում է լիառատ։

Բայց ես այն սուրբ ջրերով,
Սուրբ Յակոբի աղբիւրին
Պիտի ցօղեմ արտոգսոյք
Իմ սաեալի օտարին։

Կամ կենատու իմ ջրով,
Ափերիս մօտ կկզած
Իր աղօթքը կատարէ
. . . . . .

Մինչ իմ որդիք (ով դիտէ)
Ծարաւ, նօթի, անուերուն,
Օտար աշխարհ յոծում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ։ . . . . .

Հեռու հեռու քշեցին
Բնիկ ազգը իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
. . . . . .

Դոցա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ դոցա հրապուրեմ
Ճպռոտ պլշած աչերը։

Բանի որ իմ զուարակուն
Էապէս կու մնան պատնդուխտ՝
Ջիս միշտ ազուր կոսանեք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ։ . . . „

Իշ չխօսեց Արարքը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ օղակ ոճի պէս
Առաջ սողաց մակեցին։—

ՑԵՐԳԱՐԱՆ ՏՊԵԱԼ Ի ՄՈՍԿՈՒԱ

ԱՕԳՈՍՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴՐՈՒԻԼ ՍԿՍԱԾ ՕՐԸ

25 ՕԳՈՍՏՈՍ 1860

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր
Ի՞նչ կ՚սպասէք ելնել ի հանդէս.
Ի՞նչ կ՚սպասէք.— սիրտ կդիմանայ,
Սիրտ որ Ազգաւէր ըլլալ կցանկայ,
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ,
Եւ դեռ անտարբեր ցարդ մնալ յաւէտ։
Խեռ ատելութեան և չար նախանձու
Սերմերն ու ոգին հեռա՜ մղենք հեռու.
Սիրտ սրտի կապուած, թեւ թեւի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած.
Օ՛ն վազենք յառաջ ի տուրբ խաչն վառած,
Օ՛ն երթանք յառաջ, և անձնատուէր՝
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտաւոր.
Հայ մի վհատիր, սիրտ առ և սիրտ տուր,
Տկարք զօրանան, քաջք խրախուսին,
Վատերը բացուին, վատերը զատուին,
Ճշմարիտ հայերն յառաջ թող անցնին.
Խաչ, սէրն են նշան ճշմարիտ Հայուն
Խաչ, սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն.

Սիրոյ դրօշներ
Թող արդ պարզուին,
Հաշտութեան ձայներ
Թող արդ հնչուին.
Հայն մէկ սիրտ եղաւ
Սիրով միացաւ
Սուտ են որ ըսեն
"Հայք զկրար կատեն"

Սուրբ Արարատեան մայր աթոռոյն գիրկը,
Եկէք, հայկազունք եկէք միանանք.
Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրտը,
Օրհնելով Տէրը, որ մեզ պարգեւեց
Մեր Ազգին կարգն ու հոգին,
Ազգային Սահմանադրութիւն
—. Յաւերժացի արդիւնաւէտ։

ՍՏԵՓԱՆ Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ։

ԱՌ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արիք Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարեւ մ՚ալ տանք,
Որ Ազգն երբ զԱնի փրկարար գոչեց,
Նոր հոգի, նոր կեանք Անոր պարգեւեց։
Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած։
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Օրկանք, բռնութիւն վատթար վարչութեան
Իերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց
Եւ կենաց ուղին մեր առջին հարթեց։
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ
Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեզ
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ջնջեց ամենայն կարծիք անձնական
Խեղդեց ամենայն անհատական ձայն,
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին
Առաջնորդ լինել գործոց ազգային։
Այն որ Աստուծու ձայն տուաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի
Կեցցէ, կեցցէ, կերցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայերս անարգուած փրկեց բարձրացուց
Մարդկային կոչման մեզ արժանացուց,
Շնորհեց մեզի, զոր ազատն Աստուած
Մարդկային երկրորդ նշանն է դրած։
Որուն շնորհիւն յարգ ստացանք մենք.
Անոր յարգ տալով ապրինք ու երդենք,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Դու ալ Հայաստան, սիրուն Հայրենիք,
Ալ այսուհետեւ մի ոգար լռիկ,
Օր մ'ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ
Օրքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ։
Ալ մի լար մայրիկ լացդ ի պար փոխէ
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երգէ
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայեր, միանանք մեր մօրն հետ օրհնենք
Օանանք, որ մեզի տուին տուրբ օրէնք,
Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թող վարեն ուրախ ի կեանք փառունակ
Թող և մեր որդիք հետ անոնց անուան
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Աղգն ու Սահմանադրութիւն։

Յ. Գ. ՍԲՎԱՃԵԱՆ

ԲԱԺԱԿ ՈՂՋՈՒՆԻ

ԱՌ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Իջէք զուարթունք՝ և ի Ձեր թեւս ապաստան
Յայց եկցուք այսօր յանձկալին Հայաստան,
Ի՝ զծաղկապսակդ ածէք այսր զքնար՝
Որ երգէր երբեմն ի դրախտս Աղենայ,
Հանգուցեալ այժմիկ ի շիրմայ մնար՝
Հայն տուք զարթուցէք զորդիս Արամայ։
Առի դիւցազունք
Թողեալ զդամբան,
Եւ անոի զուարթունք
Երգեցեն միաբան
Ողջոյն քեզ ողջոյն
Սահմանադրութիւն։

Ով որ յեցեալ ի տխուր սափոր դիւցազանց
Վիթով յերկինս ածես նամէտ բիբս աչաց,

Ով Հայաստանեայց ոգի արթնանա՛ր՝
Ահա հաչա ակամբ ժպոխ քեզ Աստուած
Պարզի երդնելուն զոր կատարյա յեթեր
Դառնայ Ազատեալն ասում ձիթենեաց
Եփրատ առ Տիգրիս
Որմեայն առ Սեւան
Տալով առեալս
Հնչեցնեն միաբան,
Ողջոյն քեզ ողջոյն
Սահմանադրութիւն։

Ազգ ի յազգ սիրտ ի սիրտ՝ ոգի խառն յոգի
Սառիք ծն անդր յառապարեալ՝ սիրտք հայեցի.
Օ՛ի էրնոգ անոսիլ պարզի արդ յաչս իմ. . .
Ահա յոյս և սէր՝ արձակս զոյգ հրեշտակք
Աղաղակեալն մեզ . . . ով Տէր . . խաղաղեցիմ . .
Ա՛յլ, զոյգ վիպանն սիրոյ ոյգ բառակք . . .
Հայկազանք առ Հայկազանս
Դարձք գարուց՝ որ գան
Տալով արձագանս
Կրկնեցնեն միաբան
Ողջոյն քեզ ողջոյն
Սահմանադրութիւն։

Թ. ԹԵՐԶԵԱՆ

365-58-62

ԸՆԴ ԲԵՐԿՐԱՌԻԹ ԱՅՑԵԼՈՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ՍԱՐԳՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԷ

Ի ԲԵՐԱ · 10 ՅՈՒՆԻՍ 1861

Ընդ վեհ այցելս Հովսէփ մեծի
Խղճարմի բերկրանս կայառէ թագաւ,
Ի գոմս խորոմս սեռամբ և հիմունք
Թագաւս, Թնդան քաղցր ի նուագս։
Քեզ ընդ առաջ արդ Ճեպեալ
Եւ մեք սանուէքս Ղարեկեան,
Յոլովս եբգոց բերկրապատար
Մնամք Աջոյդ օրհնութեան։

Ո՞ւմ զգեզուած մերոց պարից
Ո՞ւմ ձօնեացուք զարժանին,
Թէ ոչ Հովսէփ ազգասէրն
Որ ի սուրբ սէր կարդաս հրաւէր։
Երկին առ քեզ էս Հայոց
Բաստ բիւր, օրէնս, բարիս հոծ,
Տուն Արամայ քեզ պարսի
Զանդրէն կանգնումն փառաց իւրոց։

Որ քեզ Հայոց սիրաք ի մի
Ի սէր ի սերս յօրէցան,
Նոա, երկրաւթիւն բնաւ ի բաց
Հարածեցան ի Հայկազանց։
Երկինք ապա ի գահդ արքի
Ի գիր ամաց տարաձիգ
Հրեղ ի միտս Հայկեան գրոհի
Պարգեւեցին զօրութիւն։

Հ. Ս. ԱԼԱՍԱՆԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
Армянской ССР
им. А. Мясникян
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

187